ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-20/67

ք. Երևան « 18 »« 09 » 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Զանգակ-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս.Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **20304800** (**Քսան միլիոն երեք հարյուր չորս հազար ութ հարյուր**) ՀՀ դրամ՝ ներառյալ 29-37-րդ չափաբաժինների ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների

փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուը այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Զանգակ-97» ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Կոմիտասի պողոտա 49/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011033447	Հ/Հ 2050022077491001
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00830786
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ս. Մկրտչյան
/ստորագրություն/ Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«18» 09 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-20/67 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1	22111110/95	Դասագրքեր-1	Գնման առարկա է հանդիսանում **Մայրենի լեզու-2 դասագիրքը** Սփյուռքի դպրոցների համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակ՝ Ջուլիետա Գյուլամիրյան Բովանդակային չափանիշներ Պատկերազարդ դասագիրքը նախատեսված է Սփյուռքում մայրենի լեզուն ուսումնառող երեխաների համար: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 80 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	500	1600	800000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
2	22111110/96	Դասագրքեր-2	Գնման առարկա է հանդիսանում **Մայրենի լեզու-3 դասագիրքը** Սփյուռքի դպրոցների համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակ՝ Ջուլիետա Գյուլամիրյան Բովանդակային չափանիշներ Պատկերազարդ դասագիրքը նախատեսված է Սփյուռքում մայրենի լեզուն ուսումնառող երեխաների համար: Շարունակում է «Մայրենի 2» դասագրքի ուսումնական նյութը: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 80 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր	հատ	450	1600	720000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա					
3	**22111110/97**	**Դասագրքեր-3**	Գնման առարկա է հանդիսանում **Մայրենի 4** դասագիրքը Սփյուռքի դպրոցների համար Հեղինակ՝ Ջ. Գյուլամիրյան և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Բովանդակային չափանիշներ Պատկերազարդ դասագիրքը նախատեսված է Սփյուռքում մայրենի լեզուն ուսումնառող երեխաների համար: Շարունակում է «Մայրենի 3» դասագրքի ուսումնական նյութը: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 120 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	960	1600	1536000	Մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը
4	**22111110/98**	**Դասագրքեր-4**	Գնման առարկա է հանդիսանում **Հայոց լեզու 5** դասագիրքը Սփյուռքի դպրոցների համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակներ՝ Հովհաննես Զաքարյան, Յուրի Ավետիսյան Բովանդակային չափանիշներ Նախատեսված է Սփյուռքի հայկական այն դպրոցների համար, որտեղ ուսուցումն իրականացվում է արևելահայերենով: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ՝. երկգույն Էջերի քանակը՝ 144 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	100	2200	220000	Մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը
5	**22111110/99**	**Դասագրքեր-5**	Գնման առարկա է հանդիսանում **Հայ գրականություն 5** դասագիրքը Սփյուռքի դպրոցների համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակ՝ Հովհաննես Զաքարյան Բովանդակային չափանիշներ Նախատեսված է Սփյուռքի հայկական այն դպրոցների համար, որտեղ ուսուցումն իրականացվում է արևելահայերենով: Այս գիրքը հաջորդում է «Մայրենի 4» դասագրքին: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր	հատ	60	2200	132000	Մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը

			Էջերի քանակը՝ 144 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա					
6	**22111110/100**	**Դասագրքեր-6**	Գնման առարկա է ահնդիսանում. **Հայոց լեզու 6** դասագիրք Սփյուռքի դպրոցների համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակներ՝ Հովհաննես Զաքարյան, Յուրի Ավետիսյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի հայկական այն դպրոցների համար, որտեղ ուսուցումն իրականացվում է արևելահայերենով: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 144 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	50	2200	110000	Մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը
7	**22111110/101**	**Դասագրքեր-7**	Գնման առարկա է հանդիսանում. «**Մեծ Միեր**» երկլեզու դասագիրքը ռուսալեզու սովորողների համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակ՝ Ե. Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** Երկլեզու դասագիրքը նախատեսված է հայկական մեկօրյա դպրոցների միջին և ավագ խմբերի ռուսախոս սովորողների համար, որոնք կարճ ժամանակում ոչ մեծ ջանքերի գործադրմամբ կկարողանան հայերեն գրել-կարդալ, խոսել-արտահայտվել: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 176 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	500	3500	1750000	Մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը
8	**22811130/4**	**Տետրեր-1**	Գնման առարկա է հանդիսանում. **Ես սովորում եմ գրել Ա1** «Զանգակ» այբբենարանի աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը Հեղինակ՝ Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ	հատ	500	350	175000	Մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը

			Տեքստի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար					
9	**22811130/5**	**Տետրեր-2**	Գնման առարկա է ահնդիսանում. **Ես սովորում եմ գրել Ա2** «Զանգակ» այբբենարանի աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	500	350	175000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
10	**22811130/6**	**Տետրեր-3**	Գնման առարկա է հանդիսանում. **Ես սովորում եմ գրել Բ1** «Զանգակ» այբբենարանի աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Տեքստի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 24 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	427	350	149450	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
11	**22811130/7**	**Տետրեր-4**	Գնման առարկա է հանդիսանում. **Ես սովորում եմ գրել Բ2** «Զանգակ» այբբենարանի աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ**	հատ	411	350	143850	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 24 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար					
12	**22811130/8**	**Տետրեր-5**	Գնման առարկա է հանդիսանում. **Փոքր Միեր** Աշխատանքային տետր ԲԵՆ, 2 մաս և դրա մի քանի էջերի pdf տարբերակը Հեղինակ՝ Երազիկ Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** «ԲԵՆ» տետրի առաջին 12 դասերը բաղկացած են 2 մասից: 1-ին մասը այն երեխաների համար է, որոնք նոր են սովորում գրել և կարդալ: Նրանք 2-րդ մասը կարող են կատարել գրքի դասերին զուգահեռ, բանավոր: Իսկ այն երեխաները, որոնք արդեն տառաճանաչ են, գիտեն գրել և կարդալ հայերեն, 2-րդ մասի վարժությունները կատարում են գրավոր: 13-րդ դասից հետո ընդհանուր գրավոր դասեր են բոլոր երեխաների համար: Վարժություններն ու առաջադրանքները երեխաներին սովորեցնում են պարզ, գործնական քերականություն և ամրապնդում են գրքի համապատասխան թեման: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 64 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	50	3000	150000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
13	**22811130/9**	**Տետրեր-6**	Գնման առարկա է հանդիսանում. Մայրենի 2: Սփյուռքի դպրոցների համար: Տետր 1 **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան Աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 2» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	535	350	187250	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

14	**22811130/10**	**Տետրեր-7**	Գնման առարկա է հանդիսանում. Մայրենի 2: Սփյուռքի դպրոցների համար: Տետր 2 Հեղինակ՝ Ջուլիետա Գյուլամիրյան Աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 2» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	535	350	187250	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
15	**22811130/11**	**Տետրեր-8**	Գնման առարկա է ահնդիսանում. Մայրենի 3: Սփյուռքի դպրոցների համար: Տետր 1 **Հեղինակ**՝ Ջուլիետա Գյուլամիրյան Աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 3» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	480	350	168000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
16	**22811130/12**	**Տետրեր-9**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 3»** աշխատանքային տետրը Սփյուռքի դպրոցների համար: Տետր 2 Հեղինակ՝ Ջուլիետա Գյուլամիրյան Աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 3» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	450	350	157500	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

17	**22811130/13**	**Տետրեր-10**	Գնման առարկա է հանդիսանում. **Մեծ Միեր** աշխատանքային տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը Հեղինակ՝ Երազիկ Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** «Մեծ Միեր» երկլեզու դասագրքին կից այս աշխատանքային տետրն օգնում է յուրացնելու և ամրապնդելու դասավանդվող հայերեն նյութը ռուսերենի միջոցով: Առաջադրանքներում կիրառված են միայն այն բառերը, որոնք արդեն տրվել են դասագրքում: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 144 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 230 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ	հատ	540	2200	1188000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
18	**22811130/14**	**Տետրեր-11**	Գնման առարկա է հանդիսանում. «Վաղը դպրոց կգնամ. գիրք-տետրը և դրա առաջին մի քանի էջերի pdf տարբերակը **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Գիրք-տետր նախադպրոցականների և կրտսեր դպրոցականների համար Նախադպրոցականների և կրտսեր դպրոցի աշակերտներին հասցեագրված այս նկարազարդ ուսումնաօժանդակ աշխատանքային գիրք–տետրն ընդգրկում է ձեռքի մկանները զարգացնող, գրիչի, մատիտի, սոսնձի և մկրատի կիրառմամբ խաղ-առաջադրանքներ, լեզվական խաղային և հետաքրքրաշարժ վարժություններ: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 56 Կազմի թուղթը՝ կավճապատ 150 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	699	500	349500	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
19	**22111100/17**	**Ուսուցողական գրքեր-1**	Գնման առարկա է հանդիսանում Самоучитель армянского языка գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Սուսաննա Տիոյան, Օլեգ Գրիգորյան, Ռոբերտ **Բովանդակային չափանիշներ** Սույն ձեռնարկը նախատեսված է սկսնակների համար, ինչպես նաև այն անձանց, ովքեր որոշ չափով տիրապետում են հայերենին և ցանկանում են կատարելագործել իրենց գիտելիքները: Բացատրությունները տրված են	հատ	60	2500	150000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			ռուսերենով: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 392 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա					
20	**22111100/34**	**Ուսուցողական գրքեր-2**	Գնման առարկա է հանդիսանում Սովորեցնում ենք խոսել ճիշտ:Նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի ընդհանուր զարգացման ուղիները մեթոդական ձեռնարկը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակներ՝ Ա. Վարդանյան** **Բովանդակային չափանիշներ** Ձեռնարկը բովանդակում է նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի ընդհանուր զարգացման աշխատանքների գործնական առաջադրանքներ և պարապմունքների նմուշօրինակներ: Այն հասցեագրված է կրթության բնագավառի աշխատողներին: Ձեռնարկի նյութերը կարող են հետաքրքրել ծնողներին, ինչպես նաև երեխաների կրթության և զարգացման գործում շահագրգիռ այլ մասնագետների: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 168 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	200	2200	440000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
21	**22111100/19**	**Ուսուցողական գրքեր-3**	Գնման առարկա է հանդիսանում «Հնչյունային լսողություն զարգացնող քարտեր» գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակներ՝ Ա. Բալայան **Բովանդակային չափանիշներ** Այս նկարազարդ ալբոմի խաղային առաջադրանքներն օգնում են երեխաներին բառի մեջ ճիշտ լսելու բոլոր հնչյունները և զարգացնում են նրանց հնչյունային լսողությունը: Յուրաքանչյուր հնչյունին հատկացված է մեկ էջ: Երեխան որոշում է, թե այն բառի ո՛ր մասում է հնչում՝ բառասկզբո՞ւմ, բառամիջո՞ւմ, թե բառավերջո՞ւմ, և կարող է նկարը միացնել աղյուսակի համապատասխան սյունակին: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 29 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 40	հատ	200	900	180000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			Կազմի թուղթը՝ կավճապատ 130 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար					
22	**22111100/20**	**Ուսուցողական գրքեր-4**	Գնման առարկա է հանդիսանում Խոսք և հաղորդակցություն Մեթոդական ձեռնարկ գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակներ՝ Կարինե Թորոսյան **Բովանդակային չափանիշներ** Մեթոդական ձեռնարկը խորությամբ մեկնաբանում է աշակերտների խոսքային զարգացմանն ուղղված քայլերը և ընդլայնում ուսուցչի աշխատանքային հնարավորությունները: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 14,5 x 20 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 88 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար, լամինացիա	հատ	25	600	15000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
23	**22111100/21**	**Ուսուցողական գրքեր-5**	Գնման առարկա է հանդիսանում «Խոսք և հաղորդակցություն 3» մեթոդական ձեռնարկ գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակներ՝ Գայանաե Թերզյան **Բովանդակային չափանիշներ** Մեթոդական ձեռնարկը խորությամբ մեկնաբանում է աշակերտների խոսքային զարգացմանն ուղղված քայլերը և ընդլայնում ուսուցչի աշխատանքային հնարավորությունները: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 14,5 x 20 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 88 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար, լամինացիա	հատ	35	600	21000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
24	**22111100/22**	**Ուսուցողական գրքեր-6**	Գնման առարկա է հանդիսանում «Հայոց լեզվի ուղեցույց» /ռուսալեզու միջավայրի համար/ մեթոդական ուղեցույցը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակներ՝** Կարինե Սահակյան **Բովանդակային չափանիշներ** Ուղեցույցը կազմված է «Հնչյունաբանություն», Հնչյունափոխություն, Բառագիտություն, Ձևաբանություն բաժիններից: Բացատրությունները տրված են հայերեն և ռուսերեն: Յուրաքանչյուր թեմա ամփոփվում է համապատասխան	հատ	150	1800	270000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			առաջադրանքներով: Ուղեցույցում ընդգրկված են նաև ընթերցանության, թելադրության և թարգմանության նյութեր, ինչպես նաև հայ-ռուսերեն բառարան: Առաջադրանքներում տեղ են գտել հատվածներ հայ գրողների լավագույն ստեղծագործություններից: Ուղեցույցը կօգնի նաև նրանց, ովքեր կցանկանան սովորել հայերեն: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 14,5 x 20 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 200 Կազմի թուղթը՝ կավճապատ՝ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա					
25	**22111100/23**	**Ուսուցողական գրքեր-7**	Գնման առարկա է հանդիսանում Արտագրությունների, թելադրությունների և փոխադրությունների ձեռնարկը տարրական դպրոցի համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը Հեղինակներ՝ Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Ձեռնարկում ամփոփված են տարրական դասարանների համար հանձնարարելի գրավոր աշխատանքների՝ արտագրության, թելադրության, փոխադրության բնագրեր, շարադրությունների վերնագրեր՝ տրված բառախմբով ու կողմնորոշիչ հարցարանով, ինչպես նաև շարադրությունների նմուշներ՝ ունկնդրելու և քննարկման համար: Գրքում հաշվի են առնված ինչպես ուսուցման մեկնարկային տարիքը, այնպես էլ քառամյա տարրական կրթության առանձնահատկությունները. պարզեցված են նյութերը, լրամշակված են մեթոդական ցուցումները, տեղ է տրվել լեզվամտածողության զարգացմանը նպաստող աշխատանքային ձևերին: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 142 Կազմի թուղթը՝ կավճապատ՝ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	150	1600	240000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
26	**22111100/24**	**Ուսուցողական գրքեր-8**	Գնման առարկա է հանդիսանում «Երկխոսություն ծնողների հետ» գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակներ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում տրված են ծնողներին հուզող հարցերի պատասխաններ, որոնց համար հեղինակը դիմել է ոչ միայն իր մանկավարժական փորձին ու գիտելիքներին, այլև փորձառու և գիտակ, ճանաչված մանկավարժների և հոգեբանների,	հատ	200	2200	440000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			փիլիսոփաների և գրողների, որոնց խոսքը իմաստուն է, համոզիչ, կյանքով և պրակտիկայով արդարացված: Գիրքը նախատեսված է ծնողների, ինչպես նաև մանկավարժների համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 108 Կազմի թուղթը՝ կավճապատ՝ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա					
27	**22111100/25**	**Ուսուցողական գրքեր-9**	Գնման առարկա է հանդիսանում «200 խաղ դպրոցականների համար» գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակներ՝** Աստղիկ Բալայան **Բովանդակային չափանիշներ** Ձեռնարկը կազմված է երկու բաժնից: Առաջին բաժինը պարունակում է 5 խումբ խաղեր՝ շարժուն, ուշադրությունը, սենսորային զգայությունները, թատերական կարողությունները զարգացնող և հոգեբանական: Երկրորդ բաժինը ներառում է ուսումնական խաղեր լեզվի տարբեր բաժինների՝ հնչյունաբանության, շարահյուսության, ձևաբանության վերաբերյալ և կարդալու կարողությունը, բանավոր և գրավոր խոսքը զարգացնող խաղեր: Ձեռնարկը նախատեսված է տարրական դպրոցի ուսուցիչների, սովորողների, մանկավարժական բուհերի ուսանողների համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 112 Կազմի թուղթը՝ կավճապատ՝ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	հատ	150	1800	270000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
28	**22111120/22**	**Գրադարանի գրքեր-10**	Գնման առարկա է հանդիսանում **«Կարդում ենք տանը և մանկապարտեզում»** ուսումնաօժանդակ գիրքը տարրական դպրոցների և մանկապարտեզների համար և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Կազմող՝** Լուսինե Դավթյան Մանկական ստեղծագործությունների ժողովածու **Բովանդակային չափանիշներ** Բովանդակային և կառուցվածքային առումով համապատասխանում է 2–6 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկություններին: Այն ներառում է	հատ	200	2500	500000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			նախադպրոցական պետական ծրագրով նախատեսված ստեղծագործությունների մեծ մասը: Ժողովածուում մանուկներին հետաքրքրող ու գրավող թեմաներ են՝ կենդանական աշխարհ, բնություն, խաղալիքներ, մարդկային փոխհարաբերություններ: Հայ և արտասահմանցի սիրված մանկագիրների հայտնի ստեղծագործություններում խրախուսվում են բարությունն ու ընկերասիրությունը, հայրենասիրությունն ու մաքրասիրությունը, հոգատարությունն ու աշխատասիրությունը: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 296 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 230 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					
29	22111120/23	**Գրադարանի գրքեր-11**	Գնման առարկա է հանդիսանում **«10 հայ ականավոր արքաներ» գիրքը** և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Արտակ Մովսիսյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում ներկայացված տասը հայ ականավոր արքաներն ընտրված են տարբեր դարաշրջաններից: Ընտրվել են այնպիսի գործիչներ, ովքեր իրենց բնորոշ գծերով առանձնացել են ոչ միայն ժամանակակիցներից, այլև զգալի հետք են թողել մեր ողջ պատմության մեջ: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 22 x 31 սմ Էջերի թուղթը՝ 150 գ կավճապատ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 104 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ, 1510 գ/քմ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա	հատ	200	6000	1200000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
30	22111120/24	**Գրադարանի գրքեր-12**	Գնման առարկա է հանդիսանում **«Համառոտ պատմություն հայոց»** պատկերազարդ և հանրամատչելի գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Արտակ Մովսիսյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում համառոտ և ամբողջական ներկայացված է հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հանրամատչելի շարադրանքը ավելի ընկալելի դարձնելու նպատակով գիրքն առատորեն պատկերազարդված է և հագեցած է քարտեզներով: Հասցեագրված է Հայաստանի պատմությամբ և հայագիտության խնդիրներով հետաքրքրվող ընթերցողներին: **Տեխնիկական չափանիշներ**	հատ	500	2400	1200000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 264 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա					
31	**22111120/25**	**Գրադարանի գրքեր-13**	Գնման առարկա է հանդիսանում «**Հայոց պատմություն:Հնագույն ժամանակներից** մինչև մեր օրերը» գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Աշոտ Մելքոնյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում համառոտակի շարադրված է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այն գրված է աղբյուրագիտական հիմքի վրա՝ օգտագործելով համապատասխան մասնագիտական գրականությունը: Գրքում հաշվի են առնված պատմագիտական վերջին ձեռքբերումները, և հնարավորին չափ լուսաբանված են մի շարք հիմնախնդիրներ: Գիրքը նախատեսվում է բուհերի ուսանողների, բուհ ընդունվողների, պատմության ուսուցիչների և ընթերցող լայն հասարակության համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 352 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա	հատ	150	2800	420000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
32	**22111120/26**	**Գրադարանի գրքեր-14**	Գնման առարկա է հանդիսանում «**10 հայ ականավոր արքաներ**» գիրքը ռուսերեն և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Արտակ Մովսիսյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում ներկայացված տասը հայ ականավոր արքաներն ընտրված են տարբեր դարաշրջաններից: Ընտրվել են այնպիսի գործիչներ, որոնք իրենց բնորոշ գծերով առանձնացել են ոչ միայն ժամանակակիցներից, այլև զգալի հետք են թողել մեր ողջ պատմության մեջ: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 22 x 31 սմ Էջերի թուղթը՝ 150 գ կավճապատ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 104 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ, 1510 գ/քմ ստվարաթուղթ	հատ	150	4000	600000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա					
33	**22111120/27**	**Գրադարանի գրքեր-15**	Գնման առարկա է հանդիսանում **«10 ականավոր թագուհիներ»** գիրքը արևելահայերեն և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Արտակ Մովսիսյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում ներկայացված տասը հայ ականավոր թագուհիներն ընտրված են տարբեր դարաշրջաններից: Ընտրվել են այնպիսի գործիչներ, որոնք իրենց բնորոշ գծերով առանձնացել են ոչ միայն ժամանակակիցներից, այլև զգալի հետք են թողել մեր ողջ պատմության մեջ: **Տեխնիկական չափանիշներ** *Չափսը՝* 22 x 31 սմ *Էջերի թուղթը՝* 150 գ կավճապատ *Էջերի տպ.՝ գունավոր* *Էջերի քանակը՝* 104 *Կազմի թուղթը՝* կավճապատ 170 գ/քմ, 1510 գ/քմ ստվարաթուղթ *Կազմի տպ.՝ գունավոր* *Կազմարարությունը՝* թելակար, սոսինձ, լամինացիա	հատ	200	6000	1200000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
34	**22111120/28**	**Գրադարանի գրքեր-16**	Գնման առարկա է հանդիսանում «**10 ականավոր թագուհիներ**» գիրքը՝ ռուսերեն և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Արտակ Մովսիսյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում ներկայացված տասը հայ ականավոր թագուհիներն ընտրված են տարբեր դարաշրջաններից: Ընտրվել են այնպիսի գործիչներ, որոնք իրենց բնորոշ գծերով առանձնացել են ոչ միայն ժամանակակիցներից, այլև զգալի հետք են թողել մեր ողջ պատմության մեջ: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 22 x 31 սմ Էջերի թուղթը՝ 150 գ կավճապատ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 104 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ, 1510 գ/քմ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա	հատ	150	4000	600000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
35	**22111120/29**	**Գրադարանի գրքեր-17**	Գնման առարկա է հանդիսանում «**Արևմտյան Հայաստանի 10 ուխտավայրերը**» գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Արտակ Մովսիսյան **Բովանդակային չափանիշներ** Սա գրքային ճանապարհորդություն է, որը, սկսվելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանից, ընթերցողին տանում է Արևմտյան Հայաստան՝ Անի, Կարս, Դարույնք (Բայազետ), Այանց (Այանիս), Վան, Աղթամար,	հատ	200	6000	1200000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			Տիգրանակերտ (Նփրկերտ), Եդեսիա, Արշամեա, Նեմրութի սրբավայր՝ ներկայացնելու այսօր Թուրքիայի տիրապետության ներքո Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասը, բացահայտելու, թե ինչ է մնացել մեր նախնյաց հանճարի ստեղծածից: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 22x 31 սմ Էջերի թուղթը՝ 150 գ կավճապատ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 112 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ, 1510 գ/քմ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա					
36	**22111120/30**	**Գրադարանի գրքեր-18**	Գնման առարկա է հանդիսանում «**Խաչքար» գիրքը** և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Համլետ Պետրոսյան **Բովանդակային չափանիշներ** Գիրքը ներկայացնում է հայ մշակույթի ամենայուրօրինակ ու հայտնի դրսևորումներից մեկի՝ խաչքարի պատմամշակութային ամբողջական կերպարը՝ ներառելով նրա ծագման, ժամանակագրության, գործառույթի, ծեսի, հորինվածքի իմաստաբանության և խորհրդաբանության հետ առնչվող խնդիրների լայն շրջանակ: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 22 x 31 սմ Էջերի թուղթը՝ 150 գ կավճապատ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 76 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ, 1510 գ/քմ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա	հատ	50	6000	300000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը
37	**22111120/31**	**Գրադարանի գրքեր-19**	Գնման առարկա է հանդիսանում «**Հայ արվեստի պատմություն**» գիրքը և դրա «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Հրավարդ Հակոբյան **Բովանդակային չափանիշներ** Գիրքն ամփոփում է հայ արվեստի առաջատար ճյուղերի, այսպես կոչված, “պլաստիկ արվեստների”՝ ճարտարապետության և կերպարվեստի զարգացման պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այս բնագավառում սա անդրանիկ գիրքն է, ուր կերպարվեստի հետ շարադրված է նաև հայկական շինարարական արվեստի պատմությունը, քանզի միայն այդ ձևով է հնարավոր լիարժեք և գիտականորեն ճիշտ ներկայացնել միմյանց շաղկապված արվեստի տվյալ ճյուղերի կազմավորման և զարգացման պատկերը:	հատ	40	48000	1920000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

			Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 22 x 29 սմ Էջերի թուղթը՝ 135 գ կավճապատ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝5 76 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ, 1510 գ/քմ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, սոսինձ, լամինացիա					
38	**22111120/32**	**Գրադարանի գրքեր-20**	Գնման առարկա է հանդիսանում **«Հայ դասական գրողներ 6»** գիրք փաթեթը և յուրաքանչյուր գրքի «Բովանդակություն» բաժնի և առաջին բովանդակային միավորի pdf տարբերակը **Հեղինակ՝** Նվեր Վիրաբյան **Բովանդակային չափանիշներ** «Հայ դասական գրողներ» ուսումնաօժանդակ ձեռնարկների փաթեթը ներկայացնում է վեց դասական գրողների հակիրճ կենսագրությունը, ինքնակենսագրական դրվագներ, գրողների ստեղծագործությունը լուսաբանող հոդվածներ, լուսանկարներ, ինչպես նաև նրանց մասին կարծիքներ և հուշեր: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 22 x 29 սմ Էջերի թուղթը՝ 70 գ/քմ: Օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Ձեռնարկների քանակը՝ 6 Կազմի թուղթը՝ օֆսետ 120 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար	հատ	200	4200	840000	Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը

1-38 չափաբաժինների համար.

1. Ապրանքները թողնվում են «Զանգակ-97» ՍՊԸ-ին ի պահ՝ մինչև ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից տրամադրվի առաքման հասցեն: Տեղափոխումը և բեռնաթափումն իրականացվում է Կատարողի կողմից:
2. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
3. Բոլոր միավոր ապրանքները 1-ին կամ 2-րդ էջում պետք է ունենան «Հայաստանի Հանրապետության նվեր է. վաճառքի ենթակա չէ» նշումը: Նշումը կարող է կատարվել ՍՊԸ-ի համար ցանկացած ընդունելի տարբերակով (լինի տպագրած, կնքված, սոսինձված և այլն):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ս.Մկրտչյան

Կ.Տ

Հավելված N 2
«18» 09 2020թ. կնքված
ՀՀԿՄՄՆՄԱՊՁԲ-20/67 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
Չափաբաժնի համարը	**Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**Անվանումը**	**Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում.**				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր /մինչև 30-ը/	**Ընդամենը**
1	22111110/95	Դասագրքեր-1	800000	800000	800000	800000	800000
2	22111110/96	Դասագրքեր-2	720000	720000	720000	720000	720000
3	22111110/97	Դասագրքեր-3	1536000	1536000	1536000	1536000	1536000
4	22111110/98	Դասագրքեր-4	220000	220000	220000	220000	220000
5	22111110/99	Դասագրքեր-5	132000	132000	132000	132000	132000
6	22111110/100	Դասագրքեր-6	110000	110000	110000	110000	110000
7	22111110/101	Դասագրքեր-7	1750000	1750000	1750000	1750000	1750000
8	22811130/4	Տետրեր-1	175000	175000	175000	175000	175000
9	22811130/5	Տետրեր-2	175000	175000	175000	175000	175000
10	22811130/6	Տետրեր-3	149450	149450	149450	149450	149450
11	22811130/7	Տետրեր-4	143850	143850	143850	143850	143850

12	22811130/8	Տետրեր-5	150000	150000	150000	150000	150000
13	22811130/9	Տետրեր-6	187250	187250	187250	187250	187250
14	22811130/10	Տետրեր-7	187250	187250	187250	187250	187250
15	22811130/11	Տետրեր-8	168000	168000	168000	168000	168000
16	22811130/12	Տետրեր-9	157500	157500	157500	157500	157500
17	22811130/13	Տետրեր-10	1188000	1188000	1188000	1188000	1188000
18	22811130/14	Տետրեր-11	349500	349500	349500	349500	349500
19	22111100/17	Ուսուցողական գրքեր-1	150000	150000	150000	150000	150000
20	22111100/34	Ուսուցողական գրքեր-2	440000	440000	440000	440000	440000
21	22111100/19	Ուսուցողական գրքեր-3	180000	180000	180000	180000	180000
22	22111100/20	Ուսուցողական գրքեր-4	15000	15000	15000	15000	15000
23	22111100/21	Ուսուցողական գրքեր-5	21000	21000	21000	21000	21000
24	22111100/22	Ուսուցողական գրքեր-6	270000	270000	270000	270000	270000
25	22111100/23	Ուսուցողական գրքեր-7	240000	240000	240000	240000	240000
26	22111100/24	Ուսուցողական գրքեր-8	440000	440000	440000	440000	440000
27	22111100/25	Ուսուցողական գրքեր-9	270000	270000	270000	270000	270000
28	22111120/22	Գրադարանի գրքեր-10	500,000	500,000	500,000	500,000	500,000

29	22111120/23	Գրադարանի գրքեր-11	1200000	1200000	1200000	1200000	1200000
30	22111120/24	Գրադարանի գրքեր-12	1200000	1200000	1200000	1200000	1200000
31	22111120/25	Գրադարանի գրքեր-13	420000	420000	420000	420000	420000
32	22111120/26	Գրադարանի գրքեր-14	600000	600000	600000	600000	600000
33	22111120/27	Գրադարանի գրքեր-15	1200000	1200000	1200000	1200000	1200000
34	22111120/28	Գրադարանի գրքեր-16	600000	600000	600000	600000	600000
35	22111120/29	Գրադարանի գրքեր-17	1200000	1200000	1200000	1200000	1200000
36	22111120/30	Գրադարանի գրքեր-18	300000	300000	300000	300000	300000
37	22111120/31	Գրադարանի գրքեր-19	1920000	1920000	1920000	1920000	1920000
38	22111120/32	Գրադարանի գրքեր-20	840000	840000	840000	840000	840000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ս.Մկրտչյան

Կ.Տ